ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ

ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

29.12.2020 թ.

ՀՀ Շիրակի մարզպետարանի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումների կողմից 2020 թվականին կատարված աշխատանքների մասին:

1. Զեկուցող՝ Լիպարիտ Մարտիրոսյան-Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

ՀՀ Շիրակի մարզի համայնքների 2020 թվականի բյուջեների սեփական եկամուտների տասներկու ամիսների հավաքագրման արդյունքների մասին:

2020թ. դեկտեմբերի 28-ի դրությամբ ՀՀ Շիրակի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել է 76.1 %-ով, նախատեսված 2808832.8 հազ դրամ սեփական եկամուտներից ընդամենը հավաքագրվել է 2137249.3 հազ. դրամ: Սեփական եկամուտների թերակատարումը կազմում է – 671583.5 հազ. դրամ:

Մարզի համայնքների 2020թ. բյուջեների տասներկու ամիսների սեփական եկամուտների կատարողականը ըստ հարկատեսակների հետևյալ պատկերն ունի.

/հազ.դրամ/

Եկամուտների անվանումը	2020թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
Հողի Հարկ	390814.0	262728.7	- 128085.3	67.2
Գույքահարկ	1291295.7	1038309.9	- 252985.8	80.4
Պետական տուրք	50468.8	44558.6	-5910.2	88.3
Տեղական տուրք	124453.8	104313.8	- 20140.0	80.8
Հողի և գույքի վարձակալություն, այդ թվում՝	369306.7	260160.6	- 109146.1	70.4
ա/ հողի վարձավճար	313765.9	209351.3	- 104414.6	66.7
բ/ գույքի վարձավճար	55540.8	50809.3	- 4731.5	91.5

Այլ եկամուտներ	582493.8	427177.7	- 155316.1	73.3
Ընդամենը սեփական եկամուտներ	2808832.8	2137249.3	- 671583.5	76.1

2020թ. տասներկու ամիսների փաստացի հավաքագրվածի աճի %-ը 2019թ. համեմատությամբ կազմում է -18.4 % կամ պակաս է հավաքագրվել 481063.2 հազ. դրամ:

Ըստ նախկին վարչական տարածաշրջանների՝ համայնքների բյուջեներում նախատեսված սեփական եկամուտների կատարման ցուցանիշներն են.

/հազ դրամ/

հ/հ	Նախկին վարչական տարածաշրջանների անվանումը	2020թ. նախատեսված սեփական եկամուտներ	Փաստացի կատարողական	Շեղում /+,-/	կատ. %
1	Աշոցք այդ թվում՝	124770.5	80497.9	- 44272.6	64.5
1.1	Աշոցք	82375.7	55429.7	- 26946.0	67.3
1.2	Սարապատ	42394.8	25068.1	- 17326.7	59.1
2	Ամասիա այդ թվում՝	103753.9	72412.7	- 31341.2	69.8
2.1	Ամասիա	58650.2	44758.6	- 13891.6	76.3
2.2	Արփի	45103.7	27654.1	- 17449.6	61.3
3	Արթիկ	422224.3	300291.4	- 121932.9	71.1
4	Ախուրյան այդ թվում՝	509267.3	358365.8	- 150901.5	70.4
4.1	Ախուրյան	182798.3	142238.0	- 40560.3	77.8
4.2	Մարմաշեն	141305.9	97924.7	- 43381.2	69.3
5	Անի	202986.8	131338.6	- 71648.2	64.7

Մարզի նախկին վարչական տարածաշրջաններից 2020թ. սեփական եկամուտների հավաքագրման ամենացածր ցուցանիշը գրանցվել է Արփիի տարածաշրջանում՝ 61.3%, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էր 87.4% կամ նվազման տոկոսը կազմում է 26.1, գումարային նվազումը կազմել է 9332.4 հազ. դրամ:

Մարզի քաղաքային համայնքները 2020թ. սեփական եկամուտները կատարել են՝ **Գյումրի** քաղաքը՝ 82.6%, **Արթիկ** քաղաքը՝ 77.9%:

Մարզի թվով 27 համայնքներ չեն ապահովել 2020թ. տասներկու ամիսներին արձանագրված սեփական եկամուտների կատարման մարզի միջին ցուցանիշը՝ 76.1%-ը:

Մարզպետարանը հարկերի հավաքագրման աշխատանքները արդյունավետ կազմակերպելու ուղղությամբ ձեռնարկել է բոլոր հնարավոր միջոցները, որպեսզի համակողմանի աջակցություն ցուցաբերի համայնքների ղեկավարներին՝ սեփական եկամուտների հավաքագրման գործում: Սակայն առանձին համայնքներում խրոնիկ ձևով չի ապահովվում եկամուտների հավաքագրման բարձր մակարդակ:

ՀՀ պետական բյուջեով 2020 թվականին տասներկու ամիսներին նախատեսված 5702160.8 հազ. դրամ <<Դոտացիան>> ամբողջությամբ ֆինանսավորվել է

2. Զեկուցող՝ Մովսես Մանուկյան-գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ

ՀՀ Շիրակի մարզում 2020թ. գյուղատնտեսության ոլորտում իրականացված աշխատանքների վերաբերյալ

<u>Գյուղատնտեսություն.</u>

Բուսաբուծություն. 2020 թվականին մարզի շուրջ 29000 գյուղացիական, ֆերմերային տնտեսություններում ցանված ընդհանուր գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ ունեն հետևյալ պատկերը.

Հացահատիկ՝ 2020թ. – 33125 հա 2019թ. – 33564 հա-ի դիմաց, կարտոֆիլ՝ 2020թ.-3465 հա 2019թ.-3236 հա-ի դիմաց, բանջարեղեն՝ 2020թ. - 1436 հա 2019թ. – 1373 հա-ի դիմաց:

Հիմնական մշակաբույսերի ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատությամբ պակասել են շուրջ 500 հա-ով, ընդհանուր ցանքերը 2020թ. կազմել է 48737 հա, նախորդ տարվա 49323 հա-ի դիմաց:

Գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերը մարզի տնտեսություններում.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		ԱՃ կամ նվազում /+/-/ /հա/
		2019թ.	2020թ.	
1	Հացահատիկ	33564	33125	**-439**
	որից՝ աշնանացան ցորեն	15876	14791	**-1085**
	գարնանացան	17678	18315	**+637**
2	Կարտոֆիլ	3236	3465	**+229**
3	Բանջարեղեն	1373	1436	**+63**
4	Տեխնիկական մշակաբույսեր	72	95	**+23**

2019 թվականի համեմատությամբ 2020թ. շուրջ 1100 հեկտարով պակասել է աշնանացանի ցանքատարածությունները, սակայն 630հա-ով ավելացել գանանացանի, 50 հա-ով հատիկընդեղենային մշակաբուսերի, 230 հա-ով կարտոֆիլի և 20 հա-ով տեխնիկական

մշակաբուսերի ցանքատարածությունները: 2021թ. բերքի տակ ցանվել է 14894 հա աշնանացան ցորեն, նախորդ տարվա 14791 հա-ի դիմաց:

Հատիկընդեղենային մշակաբուսերի ցանքատարածությունների ավելացմանը նպաստեց 2020 թվականին ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն ծրագրով ՀՀ Շիրակի մարզին անվճար հատկացված շուրջ 7 տոննա հատիկավոր բույսերի սերմացուները: Սերմերը տրամադրվել են մարզի հատիկ-ընդեղեն մշակող ֆերմերային տնտեսություններին և ինչպես կանխատեսվել էր ապահովվել է բարձր բերքատվություն:

Ընթացիկ տարում բերքահավաքը կատարվել է ժամանակին առանց ձգձգումների, բերքահավաքի ամփոփ տվյալների համեմատականը 2019-2020թթ. ունի հետևյալ տեսքը.

Հ/Հ	Մշակաբույսի անվանումը	Ցանքատարածություն /հա/		Միջին բերք /գ/		Համախառն բերք /տ/	
		2019թ	2020թ	2019թ.	2020թ.	2019թ.	2020թ
1.	Հացահատիկ	33564	34439	14.7	19.6	**44000**	**67500**
2.	Հատիկընդեղեն	116	160	12,6	19.6	**1460**	**3100**
3.	Կարտոֆիլ	3236	3465	210.7	216.5	**67900**	**75000**
4.	Բանջարեղեն	1373	1436	170	174	**23400**	**24900**

2020 թվականի ընթացքում մարզի 28 բնակավայրերում կարկտահարության և ցրտահարության հետևանքով վնասվել է շուրջ 4900 հա գյուղատնտեսական նշանակության հողտարածքներ, վնասի չափը կազմել է շուրջ 2.9 մլրդ դրամ:

2020թ. ընթացքում մարզում տեղադրվել է 50 հակակարկտային կայանք՝ Անի – 20, Ազատան – 4, Մարմաշեն – 8, Հայկավան – 3, Ամասիա – 5, Սարապատ – 8 և Լեռնակերտ – 1: Այժմ մարզում գործում է 149 հակակարկտային կայանք:

Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ ՀՀ Շիրակի մարզպետարանի հետ համագործակցության արդյունքում մարզի Ամասիա և Սարապատ համայնքներին տրամադրել է 11 մոտոբլոկ իրենց գյուղ գործիքներով՝ Ամասիա 6, Սարապատ 5, որոնք կօգտագործվեն համայնքներում առավել խոցելի արտադրողների կողմից:

ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության ծրագրի շրջանակներում 2020թ. 2-20 հա մակերեսով ցորենի ցանքատարածություններ մշակող տնտեսվարողներին առաջարկվել է աշնանացան ցորենի էլիտա կամ առաջին վերարտադրության հավաստագրված սերմերի գնի մասնակի սուբսիդավորում կամ փոխհատուցում՝ 1 կգ 70 դրամ:

ՀՀ Շիրակի մարզում 2020թ. ոռոգման ջրի մատակարարումը իրականացվել է «Շիրակ» ՋՕԸ-ի կողմից, ոռոգման սեզոնի ընթացքում համայնքների կողմից ահազանգ չի ստացվել ջրի ծավալի, մատակարարման ժամկետի ու գրաֆիկի խախտման վերաբերյալ:

«Շիրակ» ՋՕԸ-ի 2019-2020թթ. ջրառը, ջրտուքը և գանձումները 17.12.2020թ. դրությամբ հետևյալն են.

Հ/Հ	Ցուցանիշները	Քանակը		Չափի միավորը
		2019թ.	2020թ.	
1	Ջրառ	35879.9	39785.1	հազ. մ³
2	Ջրտուք	10414.8	11473.2	հազ. մ³
3	Հասույթ	114563.2	126205.3	հազ. դրամ
4	Գանձում	109752.8	100469.7	հազ. դրամ
5	Գանձման տոկոս	98	70	%

2020թ ոռոգվել է շուրջ 5100 հա ցանքատարածություն, վճարումների տոկոսը կազմում է 70 %, ջրառից ստացվել է 39785.1 հազ. մ³ ջուր:

Ջրամբարների լցվածությունը 19.12.2020թ. դրությամբ.

Հ/Հ	Ջրամբարի անվանումը	Ծավալը /մլն մ³/	Լցվածությունը առ 19.12.2019թ. /մլն մ³/	Լցվածությունը առ 19.12.2020թ. /մլն մ³/	Աճ/նվազում (+/-) /մլն մ³/
1	Ախուրյան	525	181.6	76.7	-104.9
2	Արփի լիճ	105	6.7	29	+22.3
3	Կառնուտ	22.6	5.78	2.74	-3.04
4	Սառնաղբյուր	4.8	0.37	0.63	+0.26
5	Վարդաքար	5	0.63	0.96	+0.33
6	Թավշուտ	6	0.25	0.27	+0.02
7	Մանթաշ	8.2	2.46	4.3	+1.84
8	Ջաջուռ	0.28	0.17	0.16	-0.07
Ընդամենը		**151.88**	**16.35**	**38.06**	**+21.64**

Լցվածությունը 19.12.2019-19.12.2020թթ. հանրագումարը հաշվարկված է առանց Ախուրյանի ջրամբարի

Անասնապահություն.

Գյուղատնտեսությամբ զբաղվող բոլոր տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա անասունների հաշվառման արդյունքները ամփոփ տեսքով բերվում է ստորև ներկայացվող աղյուսակում /2019-2020թթ./.

	2019թ.	2020թ.	Աճ/նվազում (+/-)
Խ.ե.կ.	86 964	87 095	+131

/հազ. գլուխ/			
Որից՝ կովեր /հազ. գլուխ/	40 799	40 986	**+187**
Խոզեր /հազ. գլուխ/	20 222	23 676	**+3454**
Ոչխարներ և այծեր /հազ. գլուխ/	71 811	64 186	**-7625**

ՀՀ Շիրակի մարզում անասնաբուծական հիմնական մթերքների արտադրության 2019-2020թթ. ցուցանիշները.

Անասնաբուծական մթերք	**Համախառն արտադրանք**		**Աճ/վնազում**
	2019թ.	**2020թ./սպասվող/**	**+/-**
Միս /հազ. տ/	24.7	24.9	**+0.1**
Կաթ /հազ. տ/	100.8	100.4	**-0. 4**
Ձու /մլն հատ/	45.6	43.2	**-2. 4**

ՀՀ ԷՆ «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային Կազմակերպության համայնքը սպասարկող անասնաբույժների միջոցով «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» Ծրագրի շրջանակներում մարզում իրականացվում է հակաանասնահամաճարակային ախտորոշիչ /բրուցելյոզ, լեյկոզ, տուբերկուլյոզ/ և կանխարգելիչ /սիբիրախտ, էմկար, դաբաղ, հանգուցային մաշկաբորբ, խոզերի դասական ժանդախտ, թռչունների Հ/ միջոցառումներ։

«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի աշնանը կատարված մոնիթորինգի արդյունքում մարզի թվով 21 համայնքների 3478 հեկտարի վրա իրականացվեում են մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի միջոցառումներ։ Համայնքներին է անհատույց հատկացվել է 430,24 լ «Բրոմադիալոն» տեսակի մկնասպան թունանյութ։

ՀՀ Շիրակի մարզում գործում է թվով 2 սպանդանոց՝ «Բանդիվան կաթ» ՍՊԸ, որը գտնվում է Ամասիա համայնքի Բանդիվան բնակավայրում և «Արփի լենդ» ՍՊԸ՝ գտնվում է Արփի համայնքի Արդենիս բնակավայրում, որոնք համայնքային նշանակության չեն և իրականացնում են միայն սեփական անասնագլխաքանակի մորթը։

Աշոցք, Հայկաձոր և Արեգնադեմ բնակավայրերում ընթանում են նոր սպանդանոցների կառուցապատման աշխատանքները։

«Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» 2-րդ ծրագրի շրջանակներում Սարապատ համայնքի Հարթաշեն բնակավայրում ընթանում է

արոտավայրերի ջրարբիացման համակարգի, փարախների և հովիվների տների կառուցապատման աշխատանքները, որը կավարտվի 2021 թվականի գարնանը, իսկ Աշոցք համայնքի Մեծ Սեպասար, Ղազանչի և Զույգաղբյուր բնակավայրերում աշխատանքները կսկվեն Սարապատի շինարարական աշխատանքների ավարտից հետո: Ընդհանուր կկառուցվի 23000 գծամետր ջրատար, 4 հովվի տուն, 4 փարախ, 10 խմոց, ծախսը մոտ 560 մլն դրամ որի 5% համաֆինանսավորվում է համայնքների կողմից:

Գյուղատնտեսության ոլորտում իրականացվող պետական օժանդակության ծրագրեր.

1) «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր
2) «ՀՀ-ում 2019-2024 թվականների տավարաբուծության զարգացման» ծրագիր
3) «Փոքր և միջին «խելացի» անասնաշենքների կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագիր
4) «Ոռոգման արդիական համակարգերի ներդրման համաֆինանսավորման» ծրագիր
5) «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում կարկտապաշտպան ցանցերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորման» ծրագիր
6) «ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագիր
7) «Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագիր
8) «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր
9) «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագիր
10) «Հացահատիկային, հատիկաընդեղեն և կերային մշակաբույսերի սերմնաբուծության զարգացմանն աջակցության» ծրագիր
11) Հայաստանի Հանրապետությունում 2019-2023 թվականների ոչխարաբուծության և այծաբուծության զարգացման պետական աջակցության ծրագիր
12) Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության ծրագիր
13) Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության ծրագիր

«Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում ԷՆ ԳԽՆՄ վարչության Շիրակի բաժնում մասնակցել են ծրագրային դասընթացների և հավաստագրվել են 561 քաղաքացիներ: բաժնի մասնագետների կողմից առցանց հավաստագրման վերաբերյալ տեղեկացվել են 2003 քաղաքացիներ:

«Փոքր և միջին» «խելացի» անասնաշենքների կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում 2020թ-ին

Շիրակի մարզում շահագործման են հանձնվել 3 հատ 3-րդ մոդելի անասնաշենքեր՝ Նոր Կյանք, Արթիկ համայնքներում և «Գյումրի սելեկցիոն կայանում»։

«Փոքր և միջին ջերմատնային տնտեսությունների ներդրման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում իրականացվել են 12 տեղազննություն և մոնիթորինգ։ Ծրագրի շրջանակներում Շիրակի մարզում 2020թ-ին կառուցվել է 1 հատ 1-ին մոդելի ջերմատուն՝ «Գյումրի սելեկցիոն կայանում»։

«Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում 2020թ. -ին ՀՀ իրականացվել է 113 մոնիթորինգ։

3. Զեկուցող՝ Լեյլի Ասլանյան - առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին փոխարինող

ՀՀ Շիրակի մարզի առողջապահության և սոցիալական ապահովության ոլորտում 2020թվականին իրականացված աշխատանքների վերաբերյալ

Առողջապահության ոլորտ

ՀՀ Շիրակի մարզպետարանի ենթակայությամբ գործում են թվով 31 բժշկական հաստատություններ նախորդ տարվա 32-ի փոխարեն, քանի որ Համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի ապրիլի 23-ի թիվ 614-Ա որոշման՝ «Գյումրու արյան փոխներարկման կայան» ՓԲԸ-ն միացվել է «Պրոֆեսոր Ռ.Օ.Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ին։ Ընթացքի մեջ են ՀՀ Կառավարության 2020 թվականի նոյեմբերի 10-ի «ՀՀ կառավարության 2006 թ-ի նոյեմբերի 2-ի թիվ 1911-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» թիվ 1527-Ն որոշմամբ սահմանված աշխատանքները, համաձայն որի «Գյումրու ծննդատուն», «Գյումրու ուռուցքաբանական դիսպանսեր» և «Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա»ՓԲԸ-ները միացման ձևով վերակազմակերպվում են «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կազմում։ Մարզպետարանի ենթակայությամբ բժշկական հաստատություններում ծավալված է 541 մահճակալ, վերը նշված օպտիմալացման գործընթացի ավարտից հետո մահճակալների թիվը կկազմի 523։ Բժշկական հաստատություններում աշխատակիցների թիվը 2202 է։

2020 թվականի փետրվարի դրությամբ մարզի բուժաստատություններին տրամադրված պետական պատվերի բյուջեն կազմել է 4.521.194.0 հազ.դրամ, սեպտեմբերին կատարված վերահաշվարկից հետո կազմել է 4.807.279.4 հազ.դրամ, ինչը 2019 թվականի բյուջեի համեմատությանբ 900 մլն դրամով ավելի է /3.938.135.6 հազ.դրամ/։

2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ վճարովի ծառայությունների դիմաց ստացված եկամուտների գումարը կազմել է 711865.6 հազ դրամ, 2019 թվականի նույն ժամանակահատվածում կազմել է 922106.7 նվազել է 210241.1 հազ. դրամով, քանի որ համավարակի և պատերազմի

ժամանակաշրջանում ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սահմանափակվեց պլանային դեպքերի սպասարկումը:

2020 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ մարզի բժշկական կազմակերպությունների դեբիտորական պարտքը կազմում է 102755.4 հազ. դրամ նախորդ տարվա համեմատ/75218.6/ ավելացել է 27536.8 հազ.դրամով, իսկ կրեդիտորական պարտքը՝ 460724.2հազ.դրամ նախորդ տարվա համեմատ /364488.1/ ավելացել է 96236.1 հազ. դրամով:

2020թվականի ընթացքում մարզի բժշկական հաստատություններում իրականացվել են 23438.7 հազ. դրամի վերանորոգման և 219883.0 հազ. դրամի նոր բժշկական սարքավորումների ձեռք բերման աշխատանքներ:

«Գյումրու բժշկական կենտրոն», «Գյումրու մոր ու մանկան ավստրիական հիվանդանոց» և «Արթիկի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ներում պետական պատվերի շրջանակներում ներդրվել է հիվանդանոցային պայմաններում արտահիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման emergency ծառայությունը:

«Գյումրու բժշկական կենտրոն»ՓԲԸ-ին տրամադրվել է թթվածնային կայան, որը կապահովի ոչ միայն բուժհաստատության թթվածնի պահանջարկը, այլ նաև թթվածին կմատակարարի նաև մարզի մյուս բժշկական կազմակերպություններին:

ՀՀ առողջապահության նախարարության կողմից, որպես բարձր լեռնային բնակավայրերի շտապ օգնության ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների, «Արթիկի բժշկական կենտրոն», «Ամասիայի առողջության կենտրոն», «Մարալիկի առողջության կենտրոն»ՓԲԸ-ների տրամադրվել է մեկական ՈՒԱՋ մակնիշի շտապօգնության մեքենա՝ 14200.0 հազ. դրամ արժողությամբ:

Բժշկական օգնությունը և սպասարկումը պատշաճ իրականացնելու նպատակով կազմակերպել է ՀՀ առողջապահության նախարարության կողմից կենտրոնացված կարգով, ինչպես նաև մարդասիրական օգնության ճանապարհով ձեռք բերված և մարզին հատկացված դեղորայքի ստացումը, բաշխումը մարզի բուժհաստատություններին:

Ուսումնասիրել, վերլուծել և համապատասխան ընթացք ենք տվել քաղաքացիներից ստացված մոտ 110 դիմումի: «Մանկական ուղեղայիին կաթված» հիվանդություն ունեցող 13 երեխայի տրամադրվել է Ջերմուկի «Արարատ» առողջարանի ուղեգիր:

ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի միջոցով կազմակերպվել է ընտանեկան բժիշկների, մանկաբույժների և թերապևտների և բուժքույրերի հեռավար դասընթացներ:

Մասնակցել ենք մարզպետի կողմից տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների նկատմամբ իրականացվող իրավական և մասնագիտական հսկողությանը:

Մարզում համավարակի հայտարարումից հետո կորոնավիրուսային հիվանդության ստացիոնար բուժման ծառայություններ մատուցվում են «Գյումրու ինֆեկցիոն հիվանդանոց» ՓԲԸ-ն 100 մահճակալ հզորությամբ և «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 60 մահճակալ հզորությամբ կորոնավիրուսային բաժանմունքում: «Գյումրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում գործում է նաև 13

մահճակալ հզորությամբ տրիաժ ծառայություն, որտեղ իրականացվում են կորոնավիրուսային հիվանդության կասկածելի դեպքերի հետազոտության և հետագա բուժման կազմակերպման ծառայություններ:

Համավարակի սկզբից մինչ դեկտեմբերի 14-ը ներառյալ կորոնավիրուսային հիվանդություն է ախտորոշվել թվով 250 բուժաշխատողի մոտ, որից 241-ը բուժվել և վերադարձել են աշխատանքի, 5-ը գտնվում է տնային մեկուսացման, 3-ը հիվանդանոցային բուժման մեջ: Արձանագրվել է մահվան մեկ դեպք:

ՀՀ Շիրակի մարզում համավարակի սկզբից մինչ 14.12.2020 թվականը ներառյալ արձանագրվել է կորոնավիրուսային վարակի 5899 դեպք, որից որից 213-ը 0-18 տարեկանների մոտ: Գրանցվել է մահվան 121 դեպք: Նշված ժամանակահատվածում մարզում իրականացվել է կորոնավիրուսի 25067 հետազոտություն, որից 23713-ը՝ ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Շիրակ» մասնաճյուղի լաբորատորիայում:

28.12.2020 թվականի դրությամբ ամբուլատոր պոլիկլինիկական հաստատությունների հսկողության տակ, տնային պայմաններում բուժում է ստանում կորոնավիրուսային հիվանդություն ունեցող 165 պացիենտ: Ստացիոնար բուժում ստանում է թվով 60 պացիենտ, որից Շիրակի մարզից 36, իսկ այլ մարզերից(Երևան, Արմավիր, Արագածոտն, Տավուշ, Լոռի) 24 պացիենտ:

Սոցիալական ոլորտ

2020 թվականին ընտանիքների անապահովության գնահատման համակարգում ընդգրկված է 13758 ընտանիք, որոնց տրամադրված գումարի չափը կազմել է է մոտ 5,0 միլիարդ դրամ:

Մարզպետարանի և հասարակական կազմակերպությունների համագործակցության արդյունքում ցերեկային խնամքի կենտրոններում և տնային պայմաններում խնամք է տրամադրվել 584 ծերի և հաշմանդամություն ունեցող անձի: Կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված՝ մարզում Սոցիալական մոբիլիզացման գործընթացում ներգրավված կազմակերպությունները մարզի միայնակ ծերերին, հաշմանդամություն ունեցող անձանց և սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել են սննդի փաթեթներ, ինչպես նաև միայնակ ծերերին տրամադրել են տնային խնամքի ծառայություն, սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ: «Պարենային շտապօգնություն» ծրագրի շրջանակներում՝ բարերարների, հասարակական կազմակերպությունների և մարզպետարանի աջակցությամբ շուրջ 4000 ընտանիքի տրամադրվել է սննդի փաթեթ: Գյումրու տուն-ինտերնատում շուրջօրյա խնամք է տրամադրվել թվով 160 ծերի և հաշմանդամություն ունեցող անձի, ինչպես նաև Արցախից տեղահանված քաղաքացիների: «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված հատկացումներից մարզպետարանը մոտ 1114 ընտանիքի՝ Հայրենական Մեծ պատերազմի վետերանի, զոհված ազատամարտիկների և մարտական գործողությունների մասնակցած ազատամարտիկների, Ադրբեջանի կողմից սանձազերծած ռազմական գործողությունների հետևանքով զոհված, հաշմանդամ դարձած, գերեվարված կամ անհայտ կորած զինծառայողների ընտանիքների, բազմազավակ ընտանիքների և սոցիալապես կարիքավոր քաղաքացիների ցուցաբերել է դրամական

աջակցություն: Արցախից տեղահանվածներին տրամադրվել է կացարան, սնունդ, հիգիենայի պարագաներ և այլ օգնություններ:

4. Զեկուցող՝ Կարեն Բաղիշյան -զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ

ՀՀ համայնքների ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված 2020 թվականի սուբվենցիայի ծրագրի վերաբերյալ:

ՀՀ կառավարության 2006 թվականի 1708-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել թվով 68 տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաներ ստանալու նպատակով ծրագրային հայտեր, որից 60 ծրագրեր գնահատման միջգերատեսվաչան հանձնաժողովի կողմից հավանության է արժանացել, 7 ծրագրային հայտ համայքների ֆոնդային բյուջեներում համապատասխան ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով իրականացնելու են 2021 թվականին և 1 սուբվենցիոն հայտ մերժվել է:

Ծրագրերի ընդհանուր արժեքը (ներառյալ նախագծի, տեխ. հսկաղության, հեղ. հսկողության և փորձաքննության արժեքները) կազմում է **3,360,199,526** դրամ, որից ՀՀ պետական բյուջեից համաֆինանսավորման չափաբաժինը կազմում **1,943,714,561** դրամ (57,8%), համայնքի բյուջեի ֆոնդային մասից **1,288,190,802** դրամ (38,3%) և այլ ներդրողներ **128,294,163** դրամ (3,9%):

Ավարտված և ՀՀ կառավարության որոշումներով հաստատված են՝ **49 ծրագիր** (27.08.2020թ N1425-Ն՝ 3 ծրագիր, 06.11.2020թ N1787-Ն՝ 3 ծրագիր, 03. 12.2020թ N1956-Ն՝ 3 ծրագիր, 03. 12.2020թ N1981-Ն՝ 2 ծրագիր, 17. 12.2020թ N2110-Ն՝ 2 ծրագիր, 17. 12.2020թ N2112-Ն՝ 9 ծրագիր, 24.12.2020թ N2183-Ն՝ 27 ծրագիր): **6 ծրագրի** աշխատանքների կատարումը տեղափոխվել է 2021 թվական (1.Աշոցք համայնքի Համայնքի կարիքների համար աղբատար ավտոմեքենայի ձեռքբերում, 2.Բենիամին համայնքի 1-ին փողոցի 2295,2քմ ճանապարհների ասֆալտապատում, 3.Արփի համայնքի Ծաղկուտ բնակավայրի համայնքային կենտրոնի նորոգում, 4.Անի համայնքի սահմանամերձ Լուսաղբյուր բնակավայրի խմելու ջրի մատակարարման ներքին ցանցի կառուցում, 5.Մարմաշեն համայնքի Հացիկ բնակավայրի մանկապարտեզի շենքի վերակառուցում, 6.Գյումրի համայնքի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ծրագիր: **5 ծրագրի** մրցույթ չի հայտարարվել (4 համալիր փորձաքննություն և 1 սեսմակայունության արդյունքներով դիտողությունները լրամշակում են. 1.Մարմաշեն համայնքի Վահրամաբերդ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում, 2.Մարմաշեն համայնքի Շիրակ բնակավայրի մանկապարտեզի շենքի կառուցում, 3.Մարմաշեն համայնքի Ջաջուռավան բնակավայրի մանկապապարտեզի շենքի վերակառուցում, 4.Ախուրյան համայնքի Ջրառատ բնակավայրի մանկապարտեզի վերակառուցում և լրամշակում են 5. Բայանդուր համայնքի Արևային ֆոտովոլտային կայանի տեղադրում:

Ըստ արդյունքային ցուցանիշների իրականացվել է.

- Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում, ասֆալտապատում՝ 15 ծրագիր (կառուցում՝ 104000 քմ, 15,7 կմ)
- Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում՝ 2 ծրագիր (շահառու՝ 1188, կառուցում՝ 8,83 կմ)
- Ոռոգման համակարգի կառուցում/նորոգում՝ 2 ծրագիր (տնտեսության թիվ՝ 530, ոռոգվող տարածք՝ 75հա, կառուցում՝ 3,7 կմ)
- Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում՝ 5 ծրագիր (լուսատուներ 820 հատ, կառուցում՝ 42 կմ)
- Վերականգնվող էներգետիկա, այդ թվում՝ արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում՝ 8 ծրագիր (ֆոտովոլտային կայ. հզոր. 163կՎտ)
- Բնակավայրերի գազաֆիկացում՝ 1 ծրագիր (կառուցում՝ 8 կմ)
- Մանկապարտեզների կառուցում, վերակառուցում/նորոգում՝ 10 ծրագիր (երեխաների թիվ՝ 580)
- Հասարակական շենքերի (մշակույթի տուն, համայնքային կենտրոններ և այլն) կառուցում/վերանորոգում՝ 8 ծրագիր (կառուցում՝ 2519քմ)
- Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառում՝ 1 ծրագիր (շահառու՝ 78, կառուցում՝ 805քմ)
- Այգիների, պուրակների կառուցում/բարեկարգում՝ 1 ծրագիր (գույքի ձեռքբերում՝ 1021 հատ)
- Մեքենասարքավորումների ձեռքբերում՝ 7 ծրագիր (միավոր տեխնիկա և գործիք՝ 25հատ, հակակարկտային կայան՝ 24հատ)։

5. Զեկուցող՝ Լիլիթ Գորգինյան - ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ

ԸԿԵԻՊ բաժնի կողմից կատարված առանցքային աշխատանքների համառոտ ներկայացում

Մարզպետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինը 2020 թվականին իրականացրել է բաժնի կանոնադրական խնդիրներից բխող, ինչպես նաև օրվա հրամայականից ելնելով՝ բազմաթիվ գործառույթներ։ Ի սկզբանե նախատեսված ամենակարևոր և դժվարին աշխատանքը դա գիշերօթիկ հաստատությունների լուծարման և հատուկ դպրոցների՝ ՏՄԱԿ-ների վերակազմակերպման գործընթացով պայմանավորված հաջորդական գործողությունների ամբողջությունն էր, որը ենթադրում էր երեխաների վերադարձ կենսաբանական ընտանիքներ, դրանք կայունացնելուն և հզորացնելուն զուգահեռ։ Սակայն այս կարևորագույն և հիմնարար գործառույթը բեկվեց սկզբում կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված արտակարգ դրությանը հատուկ մի շարք սահմանափակումներով, ապա նաև սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության դեմ սանձազերծված պատերազմի արդյունքում

առաջացած և հրատապ լուծումներ պահանջող խնդիրներով: Ուստի զեկույցը պատրաստված է 3 բաժնից:

1. Սեպտեմբերի 27-ից սկսած Արցախի Հանրապետությունից ժամանել է 2531 քաղաքացի: Առաջին փուլում նրանք տեղավորվել են բարեկամների, հարազատների, ընկերների տներում, ինչպես նաև հյուրանոցներում և հյուրատներում: Հետագայում բնակ տարածքի հարցը, նախարարությունների հետ համագործակցության արդյունքում, լուծվել է քաղաքացիներին հանրակացարանային տիպի կացություն տրամադրելով:

Քաղաքացիների տվյալները գրանցվում են համայնքապետարանում, հետո՝ ամփոփվում մարզային շտեմարանում, տվյալները մուտքագրվում են նաև ՀՀ միգրացիոն ծառայության բազա: Ամփոփված առաջնային կարիքների հիման վրա /սնունդ, հագուստ, անկողնային և հիգիենիկ պարագաներ/ կազմակերպվում են այդ կարիքների բավարարմանը ուղղված աշխատանքները:

Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության և «Արևամանուկ» հոգեբանասոցիալական աջակցության հիմնադրամի հետ համագործակցության արդյունքում առողջապահական և հոգեբանական աջակցության կարիք ունեցող անձինք անմիջապես ուղղորդվել են համապատասխան կառույցներ՝ ծառայություններ ստանալու:

Շիրակի մարզից, պետական միջոցներ հաշվին, Արցախի Հանրապետություն է տեղափոխվել 225 քաղաքացի, ինքնաբուխ, սեփական միջոցներով՝ 756 քաղաքացի:

Արցախի Հանրապետությունից ինքնաբուխ ժամանած 204 դպրոցահասակ երեխա ընդգրկվել է Շիրակի մարզի 43 ուսումնական հաստատությունում, նրանց տրամադրվել են դասագրքեր, գրենական պիտույքներ:

2. Համավարակով պայմանավորված արտակարգ դրության պայմաններում բաժնի մասնագետները թեև հեռավար, սակայն անցել են 7/24 ռեժիմով աշխատանքի, իրականացրել են հեռավար 696 քաղաքացու առաջնային կարիքի գնահատումներ, յուրաքանչյուր քաղաքացու հետ նվազագույնը 3-4 անգամ:

Բոլոր կազմակերպությունների կողմից աշխատանքների մի մասը կազմակերպվել և իրականացվել են հեռավար, իսկ խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատությունների, ցերեկային կենտրոնների շահառու երեխաների ընտանիքներին տրամադրվել են սննդի և հիգիենիկ պարագաների փաթեթներ:

Կազմվել են 4 և ավելի երեխա ունեցող բազմազավակ, սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակները, տրամադրվել տարբեր բարեգործական կազմակերպությունների, որոնց կողմից այդ ընտանիքները ստացել են բնաիրային և հիգիենիկ փաթեթներ:

Կազմակերպվել են հեռավար քննարկումներ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հետ տարվող աշխատանքների վերակազմակերպման, վերածածկը բացառելու, անհրաժեշտ տեխնիկական միջոցների անհրաժեշտության, ընտանիքներից բռնության դեպքերի վերաբերյալ ստացած ահազանգերին նոր ձևաչափով արձագանքման նպատակով: Արդյունքում՝ ՀՀ Շիրակի մարզպետի անմիջական միջամտությամբ, կրթության, մշակույթի և սպորտի վարչության հետ համագործակցված 450 աշակերտի տրամադրվել են տեխնիկական միջոցներ:

3. 2020 թվականի հունվարի 10-ին, ֆինանսական խնդիրներով պայմանավորված, լուծարվել է «Թռչունյան տուն» հաստատությունը: Հաստատությունում գրանցված էր 108 երեխա: Նրանցից 85 -ը վերադարձել է կենսաբանական ընտանիք /եզրակացություն ունեցող 39 և չունեցող 46 երեխա/: Բարձր ռիսկայնություն ունեցող 12 ընտանիքի 23 երեխա տեղափոխվել է թիվ 2 գիշերօթիկ խնամքի հաստատություն:

Ընդհանուր առմամբ 2 պետական և 1 բարեգործական հաստատություններից դուրս է գրվել 104 երեխա: Հաստատությունների բեռնաթափում ծրագրով դուրս գրված բոլոր երեխաները յուրաքանչյուր ամիս ստացել են բնաիրային փաթեթ, էլեկտրաէներգիայի վարձավճար, տարեկան 2 անգամ հագուստ և գրենական պիտույքներ: Ընտանիքների հետ ստորագրվել են միջամտության պլաններ, համաձայն որի՝ անհատական միջոցառումներ են իրականացվել և իրականացվում այդ ընտանիքների կարողությունները զարգացնելուն ուղղված: 2 Երեխա մանկատնից վերադարձել է կենսաբանական ընտանիք, 1-ը՝ տեղավորվել է մանկատուն:

Տարածքային հաշվառման է վերցվել և ուղարկվել կենտրոնացված հաշվառման առանց ծնողական խնամքի մնացած 10 երեխայի 7 առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող 1 անձի անձնական գործ:

Շարունակվում է հանրակրթությունից դուրս մնացած երեխաների տվյալների հավաքագրումը և վերլուծությունը: 2020 թվականին բացահայտված 15 դեպքի առնչությամբ իրականացվում են աշխատանքային ծրագրով նախատեսված միջոցառումներ: Ցանկանում եմ հատուկ նշել, որ այս թիվը առկա կրթության ժամանակահատվածում արձանագրված ցուցանիշն է: Երեխաներից 8-ը վերադարձել են հանրակրթություն: 7-ի հետ աշխատանքները շարունակվում են:

Բաժնի նախաձեռնությամբ, համավարակով պայմանավորված սահմանափակումների ընթացքում, անհրաժեշտ սոցիալական դեպքերի վարումը իրականացվեցին աշխատանքային նոր հեռավար ձևաչափով՝ յուրաքանչյուր շաբաթ 2 անգամ, հետ աշխատանքային ժամերին: Մեզ հետ միաժամանակ այս գործին լծվեցին բոլոր կազմակերպությունները, ովքեր այս կամ այն չափով կարող էին օգտակար լինել տվյալ ընտանիքին՝ հանուն երեխայի լավագույն շահի: Արդյունքում՝ 2020 թվականին 85 դեպքի լայնաֆորմատ քննարկում է իրականացվել, այդ թվում ընտանեկան բռնության ենթարկված 4 անձի:

2020 թվականին կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 231 երեխայի տրամադրվել է վկայագիր: Բաժնի կողմից դեռևս տարեսկզբից կրթության վարչության հետ համագործակցության արդյունքում իրականացվել են մարզի բոլոր տարածաշրջանների հանրակրթական դպրոցների վարչական կազմերի և բազմամասնագիտական թիմերի վերապատրաստում՝ ներառական կրթության իրականացումը սահուն իրականացնելու նպատակով:

2020 թվականի ընթացքում հաշվառվել է 11 որդեգրողի թեկնածու և որդեգրման ենթակա 1 երեխա:

6. Զեկուցող՝ Ալբերտ Մարգարյան -քաղաքաշինության վարչության պետ

2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ՀՀ Շիրակի մարզում քաղաքաշինության բնագավառում 2020թ. ընթացքում պետական բյուջեի միջոցներով և այլ ֆինանսական աղբյուրներով իրականացվել են շուրջ **30.951** մլրդ դրամ գումարի կապիտալ ներդրումներ (աղյուսակը կցվում է)

2018 (մլրդ դրամ)	**2019 (մլրդ դրամ)**	**2020 (մլրդ դրամ)**
20.18	26.745	30.952

Կրթական օբյեկտների շինարարություն: Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են Բերդաշեն բնակավայրում նոր դպրոցի շենքի կառուցման աշխատանքները, իսկ Կապս և Արգնադեմ բնակավայրերում նոր դպրոցների շենքերի կառուցման աշխատաննքերը կմեկնարկեն առաջիկայում: Իրականացվել և ներկայումս ընթանում են մարզի թվով 4 դպրոցների կառուցման և հիմնանորոգման աշխատանքները: Իրականացվել են Գյումրու «Սուրբ Մարիամ» մանկապարտեզի կառուցման աշխատանքները: Շարունակվել են Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի վերակառուցման աշխատանքները:

Առողջապահական և մշակութային օբկյեկտների շինարարություն: Ընթացքի մեջ են Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցի ծննդատան կառուցման աշխատանքները: Իրականացվել են Գյումրու հոգեկան առողջության կենտրոնի ներքին հարդարման աշխատանքներ: Իրականացվել է «Գյումրու ժողովրդական գործիքների պետական նվագախումբ» ՊՈԱԿ-ի շենքի վերանորոգման աշխատանքները:

Սուբվենցիոն ծրագրեր: Մարզում իրականացվում են շուրջ 3.3 մլրդ դրամ արժեքով թվով 63 տարբեր բնույթի սուբվենցիոն ծրագրեր: Կատարվել և ներկայումս ընթացքի մեջ են թվով 8 բնակավայրերի (Մարմաշեն, Լեռնուտ, Քեթի, Ջաջուռ, Հացիկ Շիրակ, Վահրամաբերդ, Ջրառատ) մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքները: Արդենիս, Աղվորիկ, Բայանդուր, Երազգավորս, Լուսաղբյուր բնակավայրերում իրականացվել են ջրամատակարարման և ոռոգման աշխատանքներ: Վերանորոգվել է Լեռնակերտ համայնքի մշակույթի տան շենքը: Մարզի թվով 12 համայնքներում կատարվել են արտաքին լուսավորության ցանցի ընդլայնման և ֆոտովոլտային կայանների տեղադրման աշխատանքներ: Իրականացվեցին մարզի 15 համայնքների ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, նորոգման և հիմնանորոգման աշխատանքներ:

2020 թվականին մասնավոր ներդրումները ՀՀ Շիրակի մարզում կազմել են շուրջ 1.5 մլրդ դրամ:

Նախագծային առաջարկությունների համաձայնեցումներ: Իրականացվել են թվով 85 քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման տարածքներում ներկայացված հողահատկացումների և նախագծային առաջարկությունների համաձայնեցումների գործընթացներ, Գյումրի քաղաքում և մարզի այլ բնակավայրերում կատարվել են օրենսդրությանը հակասող, ինքնակամ շինարարության կանխման թվով 10 կասեցման գործընթացներ:

Բնակարանային ապահովում: ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում հաշվառված զոհված զինծառայողների (ազատամարտիկների) թվով 3 ընտանիքներ ճանաչվել են ԲԳՎ ծրագրի

շահառուներ: ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերում հաշվառված թվով 128 զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների հերթացուցակները ներկայացվել են ՀՀ պաշտպանության նախարարություն:

ՀՀ կառավարության 07.05.2020թ. N712-Ն որոշման համաձայն՝ «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից շարունակվում են իրականացվել՝ ՀՀ Շիրակի մարզի թվով 8 գյուղական բնակավայրերում (Մարմաշեն, Մայիսյան, Ջաջուռ, Շիրակ, Գուսանագյուղ, Սառնաղբյուր, Բասեն, Ջրաձոր) բնակելի տների կառուցման շինարարական աշխատանքները: Ներկայումս ընթացքի մեջ են թվով 24 ընտանիքների համար բնակելի տների կառուցման շինարարական աշխատանքները, որոնցից թվով 4 ընտանիքների բնակելի տները պատրաստ կլինեն մինչև 2020 թվականի ավարտը, իսկ մնացած 20 ընտանիքների բնակելի տների կառուցման ավարտը նախատեսված է 2021 թվականի ապրիլ-մայիս ամիսներին: Ջրաձոր բնակավայրի թվով 28 ընտանիքների համար նոր բնակելի տների կառուցման աշխատանքները կմեկնարկեն համայնքի ղեկավարի կողմից նոր հողատարածքների հատկացման գործընթացն ավարտվելուց հետո:

ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի շահառու հանդիսացող թվով 5 ընտանիքներին տրամադրվել են վկայագրեր, որոնցից երեքն ադրեն իսկ ձեռք են բերել բնակարաններ:

ՀՀ կառավարության 14.11.2019թ. N1610-Ն որոշման համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզի թվով 8 գյուղական բնակավայրերում (Բասեն, Գուսանագյուղ, Կամո, Մայիսյան, Մարմաշեն, Շիրակ, Ջաջուռ, Ջրաձոր) իրականացված ԲԳՎ տրամադրման միջոցով բնակարանային ապահովման ծրագրի շրջանակներում շահառու հանդիսացող թվով 90 ընտանիքներից տրամադրված վկայագրերով բնակարան կամ բնակելի տուն են ձեռք բերել թվով 65-ը:

Ճանապարհաշինություն: 2020 թվականին մարզում ճանապարհաշինության բնագավառում ներդրումների ծավալը կազել է շուրջ **21,83 միլիարդ ՀՀ դրամ**:

Ավտոմոբիլային ճանապարհների սպասարկում: 2020 թվականին ՀՀ Շիրակի մարզի ընդհանուր օգտագործման միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանման, ընթացիկ պահպանման և շահագործման աշխատանքների կազմակերպման համար հատկացվել էր շուրջ 615.0 մլն. դրամ գումար, իսկ մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների համար՝ 193,163 մլն. դրամ:

ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցների հաշվին հիմնանորոգվող ճանապարհներ: Իրականացվել են թվով 6 միջպետական, հանրապետական և մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների առանձին հատվածների հիմնանորոգման և միջին նորոգման աշխատանքներ: 2020 թվականին շարունակվում են «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի» Տրանշ 3-ի Լանջիկ-Գյումրի 27,5 կմ երկարությամբ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները: 2020 թվականին շարունակվեց ՎԶԵԲ ֆինանսավորմամբ Գյումրի քաղաքի թվով 15 փողոցների վերակառուցման աշխատանքները:

ՀՀ Շիրակի մարզի 2020թ. տրանսպորտի ոլորտ: Ներկայումս ՀՀ Շիրակի մարզի բնակավայրերի (համայնքների) տրանսպորտային սպասարկումն իրականացվում է կանոնավոր ուղևորափոխադրումների 54 երթուղիներով, այդ թվում՝ 10 միջմարզային և 44 ներմարզային երթուղիներով: ՀՀ Շիրակի մարզի 119 բնակավայրերը գտնվում են մարզպետարանի կողմից ձևավորված կանոնավոր ուղևորափոխադրումների 44 երթուղիների ուղեգծերում: Դեռևս տրանսպորտային կապով ապահովված չէ թվով 1 համայնք՝ Արփի համայնքը, թվով 9 բնակավայրերով: Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանց ստեղծելու նպատակով ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության հետ համատեղ մշակվել է ՀՀ Շիրակի մարզի նոր երթուղային ցանցը: Երթուղային ցանցում ընդգրկված են թվով 35 ավտոբուսային երթուղիներ, որոնք ընդգրկում են մարզի բոլոր բնակավայրերը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԵՎ ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

N	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը (հազ.դրամ)	Ֆինանսավորման աղբյուրը	Ծանոթություն
1	2	3	5	7
1	**Ենթակառուցվածքներ**	**23,622,256.8**		
1.1	**Ճանապարհաշինություն**	**21,828,478.0**		
1	Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Գյումրու քաղաքային ճանապարհների ծրագիր	9,400,000.0	ՀՀ պետական բյուջե, վարկային միջոցներ, դրամաշնորհ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
2	Եվրոպական ներդրումային բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ միջանցքի ծրագիր, Տրանշ 3	6,400,000.0	ՀՀ պետական բյուջե, վարկային միջոցներ, դրամաշնորհ	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
3	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ճանապարհահատվածի կմ134+500-կմ141+500 հատվածի հիմնանորոգում	1,199,000.000	ՀՀ պետական բյուջե	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն
4	Մ-1, Երևան - Գյումրի - Վրաստանի սահման ճանապարհահատվածի կմ143+300-կմ148+300 հատվածի հիմնանորոգում	555,000.000	ՀՀ պետական բյուջե	
5	Մ-7, Մ-3-Սպիտակ-Գյումրի-Թուրքիայի սահման ճանապարհային միջին նորոգում	83,500.000	ՀՀ պետական բյուջե	
6	Հ-21, Հոռոմ-Արթիկ-Ալագյազ ավտոճանապարհի կմ 4+000-կմ8+500 հատվածի հիմնանորոգում	403,600.0	ՀՀ պետական բյուջե	
7	Հ-75, Իսահակյան-Գյումրի ավտոճանապարհի կմ 37+500-կմ 45+300 հատվածի հիմնանորոգում	699,000.0	ՀՀ պետական բյուջե	
8	Գյումրի համայնքի ներհամայնքային փողոցների վերանորոգում	120,000.0	Համայնքային բյուջե	
9	Մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանում, ընթացիկ պահպանում և շահագործում	193,163.0	ՀՀ պետական բյուջե	
10	Միջպետական, հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների ձմեռային պահպանում և ընթացիկ պահպանում և շահագործում	615,000.0	ՀՀ պետական բյուջե	
11	Շիրակ-Կամո ավտոճանապարհի կմ 0+000-կմ 4+500 հատվածի հիմնանորոգում	479,215.000	ՀՀ պետական բյուջե	
12	Արթիկի համայնքի Շինարարների փողոցի հիմնանորոգում (ամբողջ համայնքը և հարակից գյուղերը)	80,000.0	ՀՀ պետական բյուջե	Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ:
13	Մարզի համայնքներից ճանապարհաշինության ոլորտում թվով 15 սուբվենցիոն ծրագրեր	1,601,000.0	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	
1.2	**Ջրամատակարարում և ջրահեռացում**	**209,476.0**		
1	Հոռոմ համայնքի ոռոգման ներքին ցանցի անցկացման աշխատանքներ	89,476.0		«Գյուղական տարածքների տնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» Հոռոմ համայնքապետարան 5%
2	Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մարզի թվով 5 բնակավայրերում ջրամատակարարման և ոռոգման աշխատանքներ (Արդենիս, Աղվորիկ, Բայանդուր, Երազգավորս, Լուսաղբյուր)	120,000.0	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	832,532.9
1.3	**Գազաֆիկացում**	**303,668.9**		
1	Մարալիկի ԳԲԿ-ի կապիտալ նորոգում	56,025.2	Մասնավոր ներդրողներ	
2	Շիրակի մարզի Ջորական գյուղը սնող միջին ճնշման ստորգետնյա գազատարի կապիտալ նորոգում	28,595.2	Մասնավոր ներդրողներ	
3	Բնական գազի կենցաղային հաշվիչների և պաշտպանիչ արկղերի ձեռքբերում և տեղադրում	22,823.6	Մասնավոր ներդրողներ	
4	Ազդանշանային սարքերի և ինքնաշխատ վթարային անջատիչ կափույրների ձեռքբերում և տեղադրում	16,225.0	Մասնավոր ներդրողներ	
5	Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Բայանդուր համայնքի գազաֆիկացում	180,000.0	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	
1.4	**Էներգետիկա**	**1,280,633.8**		
1	Օդային գծեր «Մնի» 220 կՎ օդային գծի հենարանների ներկում - 147 հատ	54,364.8	Մասնավոր ներդրողներ	
2	Էլեկտրական սարքավորումների և օդային գծերի շահագործման ու նորոգման աշխատանքներ	2,269.0	Մասնավոր ներդրողներ	
	0.4 կՎ լարման բաշխիչ ցանցերի վերակառուցում			
3	Մալուխային գծերի վերակառուցում	1,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
4	Օդային գծերի վերակառուցում (նաև ԻՄ հաղորդալարերով)	30,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
	6(10) կՎ լարման բաշխիչ ցանցերի վերակառուցում			
5	Մալուխային գծերի վերակառուցում	10,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
6	Օդային գծերի վերակառուցում (նաև ԻՄ հաղորդալարերով)	4,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց

7	Արտադրական շենքերի վերակառուցում	28,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
	Հասցեական ծրագրեր			
8	•Ամասիա• էլ. ցանցի Բերդաշեն գյուղի Տե-9074 ԵԿ 0,4 կՎ օդային գծերի բեռնաթափում՝ •Սահմանապահ զորամաս• 10 կՎ ՕԳ-ի թիվ-19 հենասյան մոտ 63 կՎԱ հզորության հենարանային ԼՏԵ-ի տեղադրում, 100 մետր 0.4կՎ ՕԳ- ի կառուցում և բեռի վերաբաշխում:	5,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
9	•Գյումրի• էլ. ցանց, Գյումրի քաղաք L4945 6/0.4 ԼՏԵ •Պանսիոնատ/Վան• 0.4 կՎ ՕԳ վերակառուցում 600 մ, նոր ԼՏԵ-ի տեղադրում՝ վթարային կիսաքարաշեն ԼՏԵ-4945-ի ապամոնտաժում	12,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
10	110/35/10կՎ •Գյումրի-3• ԵԿ-ի վերակառուցում, 35կՎ •Ղալինջա• միաշղթա ՕԳ-ի վերամիացումը 110/35/10կՎ •Գյումրի-3• ենթակայանին, Շիրակի մարզ	250,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
	Հասցեական ծրագրեր			
11	Շիրակի մարզ Գետք համայնք/3-րդ փողոց/ թիվ 4011 ենթակայանի բեռնաթափում նոր 100/10կՎԱ հզորության ԼՏԵ-ի տեղադրում 10կՎ օդային գծերի կառուցում/350մ/0.4կՎ օդային գծերի կառուցում-250մ	11,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
12	<Պեմզա> 10 կՎ ՕԳ-ի թիվ 26 հենասյունից կառուցել 250 մ երկարությամբ 10 կՎ ՕԳ հյուղավորում, տեղադրել 63-100 կՎԱ հզորության կայմային ԼՏԵ կառոցել 100 մ 0.4 կՎ ՕԳ և իրականացնել Տե 7177 բեռնաթափում և սպառողների վերաբաշխում	8,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
13	ք.Գյումրի. Արագածի 3-րդ թ-ի Տե 301-ից/2244/կառուցել սնող ողղություններ թվով 4 շենքերի /Վարդ բաղ թաղ. 1-ին մ/շ, 2-րդ թաղ. 5-րդ շենք Վարդ բաղ թաղ. 3-րդ մ/շ, 2-րդ թաղ. 4-րդ շենք Արագած 3-րդ թաղ. 1 շենք Արագած 3-րդ թաղ. 2 շենք/	2,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
	10 և 0,4կՎ լարման օդային ցանցերի օպտիմիզացիա՝ համայնքներում ցանցերի ամբողջական վերազինում			
14	Ազատան գյուղում Տե-4027 ենթակայանի համար 10 կՎ ՄԳ-ի կառուցում և 0,4 կՎ ՕԳՄ-ի վերակառուցում	100,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
15	Տե-4006 ենթակայանի 0.4կՎ օդային գծերի վերակառուցում	36,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
16	Ազատան գյուղում Տե-4066 ենթակայանի 0,4կՎ օդային գծերի և <<Ազատան>> 110/35/10կՎ ենթակայանից դուրս եկող 10կՎ օդային գծերի վերակառուցում	76,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
17	Տե-4036 ենթակայանի 10կՎ և 0,4կՎ օդային գծերի վերակառուցում	41,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
18	Տե-4067 ենթակայանի 10կՎ և 0.4կՎ օդային գծերի վերակառուցում	97,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
19	Տե-7490 ենթակայանի 0.4կՎ օդային գծերի և <<Ազատան>> 110/350/10 ենթակայանից դուրս եկող 10կՎ օդային գծերի վերակառուցում	93,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
	Նոր սպառողների միացմանը և բաշխիչ ցանցի զարգացման նպատակային ծրագրերի իրականացմանն ուղղված ներդրումների կանխատեսվող ծավալը			
20	Նոր սպառողների կամ սպառողների վերակառուցվող սպառման համակարգերը էլեկտրական ցանցին միացմանն ուղղված ներդրումներ	300,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
	Բաշխիչ ցանցերի շահագործման կազմակերպման համար այլ ուղղություններով իրականացվելիք ներդրումների կանխատեսվող ծավալը			
21	Բնապահպանության նորմերին ուղված ներդրումներ	120,000.0	Մասնավոր ներդրողներ	20%սեփական 80% վարկային միջոց
2	**Քաղաքաշինություն**	**7,329,407.8**		
2.1	**Բնակարանաշինություն**	**842,299.8**		
1	Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետեվանքով անօթեվան մնացած 90 ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցություն ԲԳՎ տրամադրմամ միջոցով (Բասեն, Սառնաղբյուր, Ձաջուռ, Կամո, Մայիսյան, Շիրակ, Գուսանագյուղ, Մարմաշեն, Ցրաձոր համայնքներ•:	378,820.00	ՀՀ պետական բյուջե	
2	Աղետի գոտու բնակավայրերում երկրաշարժի հետեվանքով անօթեվան մնացած 27 ընտանիքների բնակարանային ապահովման պետական աջակցություն բնակարանների կառուցման միջոցով (Բասեն, Սառնաղբյուր, Ձաջուռ, Կամո, Մայիսյան, Շիրակ, Գուսանագյուղ, Մարմաշեն•:	463,479.84	ՀՀ պետական բյուջե	
2.2	**Կրթական օբյեկտների կառուցում և վերանորոգում**	**2,929,928.0**		
1	Գյումրի քաղաքի ակադեմիական վարժարանի հիմնանորոգում	722,650.0	ՀՀ պետական բյուջե՝ վարկային միջոցներ	
2	ՀՀ կրթության և գիտության նախարարության «Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ	140,000.0	ՀՀ պետական բյուջե	•Անդրեաս և ընկերներ• ՍՊԸ
3	Արթիկի թիվ 3 ավագ դպրոցի հիմնանորոգում	814,800.0	ՀՀ պետական բյուջե՝ վարկային միջոցներ	
4	Արթիկի թիվ 2 դպրոցի կառուցում	350,000.0	ՀՀ պետական բյուջե՝ վարկային միջոցներ	Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ: Սեյսմիկ անվտանգության բարելավման Ծրագիր /Ասիական զարգացման բանկ/: Ծրագրի ընդ. արժեքը 1,3 մլրդ. դրամ: 2020թ. Կիրականացվի 350,0 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

5	Փոքրաքանակ երեխաներով համալրված հանրակրթական դպրոցների մոդուլային շենքերի կառուցման շրջանակներում Բերդաշեն համայնքում դպրոցի կառուցում	72,696.9		Աշխատանքները սկսվել են: Ավարտը 2021 թվական: •Վանի• ՍՊԸ: Ծրագրի ընդ. արժեքը 607 256, 868 մլն. դրամ: 2020թ. Կիրականացվի 72,6 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:
6	«Գուսանագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի մասնաշենքերն իրար միացնող միջանցքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	3,295.1	ՀՀ պետական բյուջե	Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ:
7	«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի կառուցման ծրագիր	470,000.0	Սիմոնյան կրթական հիմնադրամ	
8	Գյումրու «Սուրբ Մարիամ» մանկապարտեզի կառուցում	105,000.0		Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ: Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման" (ՍՆՏԶ) 1-ին բաղադրիչ: Ծրագրի ընդ. արժեքը 213,0 մլն. դրամ: 2020թ. Կիրականացվի 105,0 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:
9	Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում թվով 8 մանկապարտեզների կառուցում և վերանորոգում (Մարմաշեն, Լեռնուտ, Քեթի, Ձաջուռ, Հացիկ, Շիրակ, Վահրամաբերդ, Ցրառատ)	251,486.0	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	
2.3	**Առողջապահական օբյեկտների վերանորոգում**	**210,022.4**		
1	Գյումրու հոգեկան առողջության կենտրոն ՓԲԸ-ի շենքի ներքին հարդարում	10,022.4	ՀՀ պետական բյուջե	Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ:
2	Գյումրու Մոր և մանկան ավստրիական հիվանդանոցի ծննդատան կառուցում	200,000.0	Այլ աղբյուրներ	
2.4	**Մշակութային օբյեկտների վերանորոգում**	**62,218.9**		
1	Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Լեռնակերտ և Բայանդուր համայնքների մշակույթի տների վերանորոգում	18,218.9	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	
2	Գյումրու ժողովրդական գործիքներ պետական նվագախումբ ՊՈԱԿ-ի շենքի վերանորոգում	44,000.0	ՀՀ պետական բյուջե	Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ:
2.5	**Այլ շինարարական աշխատանքներ**	**1,609,527.7**		
1	Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մարզի թվով 12 համայնքներում ֆոտովոլտային կայանների տեղադրում և արտաքին լուսավորության ցանցի անցկացում	241,867.0	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	
2	Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում Գյումրի քաղաքի բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության արդիականացման ծրագիր	513,176.7	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	
3	Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում թվով 44 հակակարկտակայանների ձեռքբերում (Սարապատ, Հայկավան, Ամասիա, Ակի, Մարմաշեն)	92,400.0	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	
4	Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մեքենասարքավորումների և գույքի ձեռքբերում (Աշոցք, Մեղրաշեն, Սարապատ, Գեղանիստ, Գյումրի)	208,953.4	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	
5	Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մարզի տարբեր բնակավայրերում այլ շինարարական աշխատանքներ	108,561.0	ՀՀ պետական բյուջե Համայնքային բյուջե	
6	«Լմբադ 2 N 40 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման աշխատանքներ	5,065.1	ՀՀ պետական բյուջե	Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ:
7	Արևային ջրատաքացման և ՖՎ համակարգերի տեղակայում չգազաֆիկացված գյուղերում	79,200.0	ՄԱԶԾ	
8	Արևային ջրատաքացման և ՖՎ համակարգերի տեղակայում չգազաֆիկացված գյուղերում	32,500.0	Հիմնադրամի շրջանառու ֆոնդ	
9	Արևային ջրատաքացուցիչ՝ 25 հատ	13,245.0	Հիմնադրամի շրջանառու ֆոնդ վարկ՝ ՈՒՎԿ-ների միջոցով	
10	Հակակարկտային կայանի ձեռքբերում	2,100.0	ՀՀ պետական բյուջե	Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ:
11	Ախուրյան խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների և ճանապարհների սպասարկման համակարգի բարելավում՝ տեխնիկական վերազինման միջոցով	10,920.0		Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ: Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման" (ՍՆՏԶ) 2-րդ բաղադրիչի՝ 2020 թվականի ծրագրերը: Ծրագրի ընդ. արժեքը 162,8 մլն. դրամ: 2020թ. Կիրականացվի 10,9 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:
12	Ակի խոշորացված համայնքի կոմունալ ծառայությունների և ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության բարելավում	192,289.5		Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ: Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման" (ՍՆՏԶ) 2-րդ բաղադրիչի՝ 2020 թվականի ծրագրերը: Ծրագրի ընդ. արժեքը 202,4 մլն. դրամ: 2020թ. Կիրականացվի 192,2 մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

13	Սարապատ խոշորացված համայնքի ծրագիր	23,750.0		Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ: Տեղական ինքնակառավարման բարեփոխումների աջակցման Ծրագիր /ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհ/: Ծրագրի ընդ. արժեքը 175,0 մլն. դրամ: 2020թ. Կիրականացվի 23,75 մլն. դրամի աշխատանքներ:
14	Ամասիա խոշորացված համայնքի ծրագիր	38,000.0		Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ: Տեղական ինքնակառավարման բարեփոխումների աջակցման Ծրագիր /ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհ/: Ծրագրի ընդ. արժեքը 160,7 մլն. դրամ: 2020թ. Կիրականացվի 38,0 մլն. դրամի աշխատանքներ:
15	Աշոցք խոշորացված համայնքի ծրագիր	23,750.0		Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ: Տեղական ինքնակառավարման բարեփոխումների աջակցման Ծրագիր /ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհ/: Ծրագրի ընդ. արժեքը 224,0 մլն. դրամ: 2020թ. Կիրականացվի 23,7 մլն. դրամի աշխատանքներ:
16	Արփի խոշորացված համայնքի ծրագիր	23,750.0	ՀՀ պետական բյուջե	Պատվիրատու՝ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ: Տեղական ինքնակառավարման բարեփոխումների աջակցման Ծրագիր /ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհ/: Ծրագրի ընդ. արժեքը 146,7 մլն. դրամ: 2020թ. Կիրականացվի 23,7 մլն. դրամի աշխատանքներ:
2.6	**Նախագծային փաստաթղթերի մշակում**	**175,411.0**		
1	ՀՀ Շիրակի մարզի համայնքների (մասնակի) միկրոռեգիոնալ մակարդակի՝ համակցված տարածական պլանավորման թվով 6 փաստաթղթերի նախագծի մշակում (տարածքային հատակագծման նախագծի և փորձաքննությունների մասով)	173,975.0	ՀՀ պետական բյուջե	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
2	«Ստեփան Ալիխանյանի անվան տիկնիկային թատրոնի շենքի տանիքի վերանորոգում» ծրագրի նախագծանախահաշվային և փորձաքննություն աշխատանքներ	336.0	ՀՀ պետական բյուջե	
3	«Գյումրու թիվ 1 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքի փայտե պատշգամբի, ինչպես նաև մարզադահլիճի հատակների վերանորոգում» ծրագրի նախագծանախահաշվային և փորձաքննություն աշխատանքներ	1,100.0	ՀՀ պետական բյուջե	
2.7	**Մասնավոր ներդրումներ**	**1,500,000.0**		
ԸՆԴԱՄԵՆԸ		**30,951,664.6**		